Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների

դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպումը կրտսեր դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Օքսանա Միրզոյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ

ՎԵՐՀԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ.....6

1.2. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆՈՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ.....9

ԳԼՈՒԽ 2.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՁԵՎԸ

2. ԴԱՍՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կրթությունը ամենահզոր զենքն է, որ դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»: Նելսոն Մանդելա

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկի ավելացմանը զուգընթաց բարեփոխումներ են տեղի ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթական կարիքի ընթացակարգերում՝ ուսումնասիրության կարիք ունեն ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական միջավայրում սոցիալականացման հնարավորությունների ընդլայնմանը: Այս համակարգում դեռևս առկա են մի շարք բացթողումներ և խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ անդրադառնում են ներառական կրթության որակի վրա, և այն երբեմն կրում է ձևական բնույթ: Կարծում ենք, որ նման խնդիրների պարզումը և բարձրաձայնումը ևս մի առիթ է դրանց մասին խորհելու, դրանց լուծման ուղիները որոնելու և կիրառության մեջ դնելու տեսանկյունից:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հասարակության մեջ ներառման գործընթացը կախված է այդ երեխաների նկատմամբ հասարակության վերաբերմունքից, նրանց կյանքի և առանձնահատկությունների մասին շրջապատողների տեղեկացվածությունից: Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է յուրաքանչյուր աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին ու կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Իսկ որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել և գնահատել որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով ու դժվարություններով: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնականոն միջավայրում՝ ապահովելու երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների և միջավայրային հարմարեցումների տրամադրումը:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր

մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր գաղափար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Սակայն կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում: Ահա դրանք.

- երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող, մանկապարտեզ և դպրոց
- մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների ուսուցմանը,
- բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն
- ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել
- ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Աշխատանքի նպատակը ուսումնասիրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպումը կրտսեր դպրոցական տարիքում :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ներառական կրթության դերը կապկու երեխաների կրթադաստիարակչական գործընթացում
- բացահայտել կապկու աշակերտների խնդիրները
- ուսումնասիրել ներառական կրթության կիրառման նշանակությունը
- ուսումնասիրել ներառական կրթության պլանավորման առանձնահատկությունները
- ուսումնասիրել ներառական կրթության կազմակերպման ժամանակակից միջոցները
- բացահայտել դասվարի աշխատանքի առանձնահատկությունները

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հետազոտական աշխատանքը կազմված է «Ներածությունից», երկու՝ իրար լրացնող և միմյանց տրամաբանական շարունակություն հանդիսացող գլուխներից <<Եզրակացությունից>>, <<Գրականության ցանկից>>:

ԳԼՈՒԽ 1.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Աշխարհում ապրում են միլիարդավոր մարդիկ, ովքեր ունեն սնվելու, կրթություն ստանալու, զարգանալու և այլ պահանջմունքներ: Սկսած մանկության շրջանից՝ անձի զարգացման համար կարևոր է համարվում կրթության և դասիրականության ճիշտ կազմակերպումը[1]: Կան բազմաթիվ մեթոդներ, ուղիներ, ծրագրեր կթությունը ավելի նպատակահարմար դարձնելու համար: Սակայն ցանկացած պետության համար առաջնային է հատուկ կարիքներով երեխաների կրթության կազմակերպումը, քանի որ նրանք ևս ունեն հավասար իրավունքներ: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար[2]:

Ներառական կրթության գլխավոր գաղափարախոսությունն այն է, որ բոլոր երեխաները անկախ ֆիզիկական, հոգևոր, մտավոր և զարգացման այլ առանձնահատկություններից, անպայման պետք է իրենց հասակակիցների հետ ներառվեն կրթության և դաստիարակության համակարգ:[3] Ներառումը բազմակողմանի գործընթաց է: Այն արտացոլում է սոցիալական, իրավական, տնտեսական, հոգեբանական և մանակվարժական հիմնախնդիրների համադրություն: Ներառական կրթության իրականացման ինչպես նաև, կառավարման գործընթացը հանդիսանում է ինչպես զարգացած, այնպես էլ՝ զարգացող երկրների սոցիալական և կրթական քաղաքականության զարգացման առաջին ուղղություններից: Համաձայան արտասահմանյան հետազոտողների՝ ներառման ճիշտ ընթացքը կախված է՝ մի շարք հանգամանքներից մանկավարժական և հոգեբանական ռեսուրսների համակարգված կիրառումից, որի մեջ մտնում է ներառական

---

[1] Сулейменова Р. А., О Включении детей с ограниченными возможностями в общеобразовательный процесс,23

[2] Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության Տնօրենի ուղեցույց, Երևան, 2009թ., 38

[3] Եթե ձեր երեխան ունի հատուկ կարիք, ՅՈՒՆԻՍԵՖ, Տաթև հոգեբանական և աջակցության կենտրոն, Երևան, 1995թ.,83 էջ

համակարգում մանկավարժների մասնագիտական իրազեկվածությունը, մանկավարժական կադրերի մասնագիտական վերապատրաստման գործընթացի իրականացումը, մանկավարժների վերաբերմունքը «հաշմանդամություն» երևույթին: Ժամանակակից հետազոտողները փաստում են, որ ներառական կրթությունը բարձր մակարդակի վրա է գտնվում այնպիսի եվրոպական երկրներում, ինչպիսիք են Անգլիան, Բելգիան, Դանիանան, ԱՄՆ-ն, Իսրայելը. այս երկրներում ներառական կրթությունը գործում է շուրջ 40 տարի[4]: Օրինակ՝ ԱՄՆ-ում ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցումը իրականացվում է հետևյալ կերպ՝ այստեղ միախառնվում են հանրակրթական և հատուկ կրթության համակարգերը:

Առաջարկվում է այս միաձուլմանը նպաստող 3 մոտեցում. «հիմնական ուղղություն», «մասայական կրթության նախաձեռնություն», «ներառում»: «Հիմնական ուղղությունը» ենթադրում է հատուկ կրթական կարիքներով երեխաների տեղավորում հանրակրթական դպրոցների դասարաններում: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այդ երեխաները հայտնվում են հասարակության մեջ, նրանց հարկավոր է ուղղարկել դպրոց, որպեսզի հետագայում առանց դժվարության հանդիպելու ներառվեն սոցիալական և ուսումնական գործունեության մեջ: «Մասայական կրթության նախաձեռնություն» ՄԿ-ն ավելի առաջ է անցնում, քան «հիմնական ուղղության» հայեցակարգը՝ առաջարկելով հատուկ կարիքներով երեխաների կրթական պայմանների հիմնարար փոփոխություններ[5]: Իսկ «Ներառման» մոդելի համաձայն՝ անկախ արատի տիպից և արտահայտման խորությունից, հանրակրթական գործընթացի մեջ՝ ըստ բնակության վայրի, պիտի ներգրավվեն բոլոր երեխաները: Այսպիսի յուրաքանչյուր երեխայի համար մասնագետների խմբի կողմից ստեղծվում են, անհատական ուսումնական ծրագրեր, որոնց համապատասխան էլ գնահատվում է յուրաքանչյուր սովորողի առաջընթացը: ՄԱԿ-ի և ՀԱԿ (համաշխարհային առողջապահական կազմակերպության) փորձագետների կարծիքով հատուկ կարիքներով անձինք կազմում են երկրի բնակչության 10%-ը, (մոտավորապես 500մլն մարդ), որոնցից ավելի քան 150 մլն-ը երեխաներ և դեռահասներ են:

Ըստ այդ տվյալների, ամբողջ աշխարհում նկատվում է հատուկ կարիքներով, հաշմանդամների թվի աճ, որը լուրջ սպառնալիք է ազգային անվտանգությանը և պահանջում է հասարակական և բժշկա-հոգեբանական ռեսուրսների մեծ քանակ: Այս մարդիկ ունեն մի շարք սահմանափակումներ ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական և այս ամենը

[4] Баталов, А.С. Использование инклюзивных педагогических технологий в диагностике речевого развития учащихся начальных классов/ А.С. Баталов// Начальная школа. – 2010. — №7 56

[5] Семенов В.Д., Взаимодействие школы и социальной среды. – М., 1986.78

նրանց մեկուսացնում է հասարակությունից՝ չթողնելով վարել ակտիվ հասարակական կյանք: Շատ կարևոր է նաև հասարակության վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Իրավիճակը կարող է փոխել այն գիտակցումը, որ բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ անկախ ֆիզիկական, մտավոր և հոգևոր խնդիրներ ունենալուց: Հենց սա է ներառական կրթություն ծրագրի գաղափարախոսությունը: Հատուկ պայմանների կարիք ունեցող երեխային հասարակության մեջ ներառելու համար կարևոր է տարբերակել նրա ունեցած խնդիրը և դրանց տարբերությունները: Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումը կազմում է ներառական կրթության առանցքը, քանի որ այն ենթադրում է՝ բոլոր երեխաների կրթական կարիքների գնահատման հավասար մոտեցում, դպրոցի ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին բոլոր երեխաների ներգրավվածության աստիճանի բարձրացում, կրթական քաղաքականության վերանայում և համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին, դպրոցական պայմանների բարելավում, ուսումնական գործընթացներում առկա խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում, սեփական համայնքում կրթություն ստանալու բոլոր երեխաների իրավունքի հավասար պաշտպանություն և հարգանք, կրթությունը որպես հասարակության մեջ բոլոր մարդկանց լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում: Ներառական կրթության համընդհանուր գաղափար ստեղծելիս և ներմուծելիս հարկավոր է հաշվի առնել տվյալ հասարակության առանձնահատկությունները: Յուրաքանչյուր հանրություն պետք է մշակի և իրագործի սեփական գաղափարները[6]: Ներառումն ավելի արդյունավետ կազմակերպելու համար մասնագետները պետք է հատուկ կարիքներով երեխային դիտարկեն ոչ այն տեսանկյունից, թե նա ինչ չի կարող անել իր կարիքների պատճառով, այլ այն կողմից, թե նա ինչ կանի անկախ իր կարիքից: Այսպիսով՝ ծրագրի իրականացումը նպաստում է հասրակության և ԿԱՊԿՈՒ երեխաների բարենպաստ հարբերություններին: Հիմք է դրվում, հավասարը հավասարի հետ քայլելու գաղափարին: ԿԱՊԿՈՒ երեխան իրեն զգում է արժևորված և հասարակության լիիրավ անդամ:

[6] ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2002թ., տարեկան հաշվետվություն:

1.2. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆՈՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է Հայաստանի Սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար: Ըստ՝ ՀՀ օրենքի «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»: Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին հանրակրթական դպրոցներում իրականացնելու ներառական կրթության ծրագրեր: 2001 թվականից «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության, դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներն իրականացնում են ներառական կրթություն[7]: ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա 2000 թ. Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան 27-րդ միջնակարգ կրտսեր դպրոցում մեկնարկեց ներառական կրթության փորձնական ծրագիրը, իսկ 2001-2005 թթ. ընթացքում ներառական կրթություն իրականացվել է փորձնական կարգով 5 հանրակրթական կրտսեր դպրոցում: 2005 թվականին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

[7] Կրթություն հանուն արժանապատիվ կյանքի, Երևան, 2006թ.,34

երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն: Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում: Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:[8] Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:

Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, հիմնված ուսումնառության համընդհանուր սկզբունքների վրա որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար: Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար

[8] Օրենքներ հաշմանդամ երեխաների կրթության իրավունքների մասին, Հույսի կամուրջ հկ, Երևան, 1999թ., 16 էջ:

համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

ԳԼՈՒԽ 2.
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՁԵՎԸ

2.1. ԴԱՍՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

«Եթե դուք վստահ չեք, թե ուր եք գնում, ապա ամենայն հավանականությամբ կհայտնվեք մեկ այլ տեղում: Եթե դուք չգիտեք, թե ուր եք գնում, ապա լավագույն քարտեզներն անգամ չեն օգնի ձեզ»:
Ռոբերտ Մագեր (հոգեբան, գրող, մանկավարժ)

Կապկու աշակերտների հետ աշխատանքում առկա հիմնական բարդությունները և խնդիրները ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ անհատական խնդիրների հետ մեկտեղ ուսուցիչների մեծամասնությունը առանձնացնում է կենտրոնացումը, պասիվությունը, մյուս աշակերտների ուշադրության շեղումը որպես հաճախ հանդիպող և դասապրոցեսի արդյունավետության վրա ազդող գործոններ: Նշված խնդիրները լուծելի են ուսուցչի օգնականի արդյունավետ ներգրավման միջոցով, կիրառելով տվյալ դասին հարմար համատեղ դասավանդման համապատասխան մոդելը:

Հետազոտական աշխատանքիս ընթացքում իմ առջև խնդիր եմ ունեցել.

- պարզել ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում՝ Նոր Երզնկայի միջնակարգ դպրոցում
- պարզել այն գործոնները որոնք առկա են դպրոցում

Ներկայացնում եմ Նոր Երզնկայի միջնակարգ դպրոցում իրականացված հարցաթերթիկների արդյունքների վերլուծությունները դիագրամի տեսքով.



Այսպիսով պարզ է դառնում, որ ուսուցիչները կարևորում են ներառական կրթության առկայությունը: Աշխատողները բացի դասավանդելուց, կարևորում են մարդկային շփումը, ինչը ևս սերմանում են երեխաների մեջ դեռ կրտսեր դասարաններից:

Ֆլորիանը և Ռուսը (2008) պնդել են, որ "Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է պատրաստել մարդկանց մուտք գործել մասնագիտություն, որը պահանջում է անհատական և կոլեկտիվ պատասխանատվություն բարելավելու բոլոր երեխաների ուսուցումը և մասնակցությունը" (էջ 556): Ներառական կրթության հիմնական գործընթացը ենթադրում է, որ հանրակրթական դասարանի ուսուցիչը ունի որոշակի գիտելիքներ և պատկերացում տարբեր ունակություններով և կարողություններով սովորողների կարիքների մասին, ծանոթ է կրթական մեթոդներին և ուսումնական պլանների ռազմավարությանը: Այս տեսանկյունից ուսուցիչը կարևորագույն դեր է խաղում կրթության որակի ապահովման հարցում և, միաժամանակ, ուսուցչի որակը ամենից շատ պայմանավորում է սովորողի հաջողությունը, քան որևէ այլ գործոն՝ ներառյալ դասարանի միջավայրային պայմանները: Ամենուրեք ներառական կրթությունը հատուկ կարիքներով երեխաների համար առավել նախընտրելի մոտեցումն է: Պարզ է, որ հատուկ կարիքներով երեխաները պետք է կրթություն ստանան հանրակրթական կառույցներում՝ առավելագույնս իրենց ունակություններին և

կարողություններին համապատասխան, և չպետք է մեկուսացվեն հատուկ դպրոցում, քանզի կրությունը այնտեղ չի կարող առաջընթաց ապահովել՝ անգամ բոլոր համապատասխան նյութերով, մեթոդներով և ծառայություններով հաջեցալ լինելու պարագայում: Այս շրջանակներում ուսուցիչների դերն է ոգևորել հատուկ կարիքներով սովորողներին ընտրություն կատարել ինչքան հնարավոր է հաճախ, լինել ազատ, սովորել իրենց իսկ միջավայրում և հաջողություններ ունենալ: Ուսուցիչները խթանում են ուսումնական գործընթացը՝ ուղղորդելով, ոգևորելով, համագործակցելով և փորձելով՝ կիրառելով ուսուցման բազմակի մեթոդներ, որոնք նախատեսված են տարբեր ուսումնական ոճերի համար և հեշտացնում են ընտրություն կատարելու կարողությունը աշակերտի կողմից և ինքնուրույն գործելու ունակությունը: Ինչևէ, ներառական դպրոցում հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող ուսուցիչների պատրաստումը և օժանդակումը կարծես թե փոփոխություններ է ապրում: Այսօր արդեն ներառական կրթություն իրականացնող դպրոցների մասնագետները նշում են այնփաստը, որ հանրակրթական դպրոցներում հնարավորություն ունեն սովորելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները և անքննելի է այն տեսակետը, որ հանրակրթական դպրոցներում նրանց ներգրավվածությունը բերում է ունեցած հնարավորությունների անասելի մեծ առաջընթացի, քան ենթադրվում էր մի քանի տարի առաջ: Ներկայումս գոյություն ունեցող փաստերը ավելի լավ են հիմնավորում իրավիճակը, օրինակ անհատական ուսումնական պլան /ԱՈՒՊ/ կազմելիս, կրթական այն խնդիրներն ու նպատակները, որ տարեսկզբին դրվում էին մասնագետի առջև, արդեն իսկ տարեկեսին անպայման որոշակի առաջընթաց են ունենում, քանի որ շատ դեպքերում երեխաների առաջընթացը և ցուցաբերած ակտիվությունը առկա կանխատեսումներից ավելին է լինում: Որպես կանոն սա պայմանավորվում է մի քանի գործոններով.

- **կրթական**
- **սոցիալական**
- **հոգեբանական**

Առաջնային դերերից մեկը սոցիալական համագործակցությանն է, քանի որ սովորելով հանրակրթական միջավայրում՝ ԿԱՊԿՈՒ երեխաները հնարավորություններ են ունենում ներգրավվել ուսումնական տարբեր գործունեություններում, տեսնել և զգալ դասընկերների կարողություններն ու հմտությունները, և կամա թե ակամա ձգտումներ ունենալ: Այս երեխաները հնարավորություն են ունենում իրենց տարեկիցներից և համադասարանցիներից տեսնել, լսել և սովորել ոչ միայն ճանաչողական գիտելիքներ, այլև սոցիալական, հաղորդակցական,

վարվեցողության շատ հմտություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն առօրյա կյանքում: Այսօր նրանցից շատերը ապահովում են պետական չափորոշչի գիտելիքների համակարգի, ինչպես նաև կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի երկրորդ մակարդակի պահանջները, որը իրենից բավականին զգալի ցուցանիշ է ներկայացնում: Վերջին 2-3 տարիների ընթացքում աշակերտների սոցիալական ներգրավվածությունը հասել է նրան, որ 10 նրանք ընդգրկվում են ինչպես անհատական, այնպես էլ զույգերով, խմբային, խաղային գործունեության մեջ՝ պահպանելով այդ գործունեությունների պահանջները, ազատ շփումը, համագործակցությունը, պատասխան տալու կարողությունը: Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության զարգացման արդյունետությունը, ըստ ՛՛Կրթություն Բոլորի համար՛՛ ծրագրի ի սկզբանե իր զարգացման ընթացքում ուներ բացթողումներ և հապճեպություն, քանի որ առաջին իսկ օրվանից այն դժգոհությունների և խուճապի պատճառ հանդիսացավ: Սակայն, այսօր արդեն, մի քանի տարի անց, ներառական կրթությունն ունի մասսայականություն և հանդիսանում է հասարակության հումանիզմի լավագույն դաստիարակության մեթոդ: Սակայն, այդուհանդերձ, ներառական կրթությունը ամբողջ աշխարհում դեռ ունի անցնելու զարգացման երկարատև ճանապարհ, և մեր երկրում այն բավականին բարդ ու դժվար է ընթանում, քանզի ունի չմշակված և չհարմարեցված մեթոդաբանություն, գնահատման համակարգ, թերի պատրաստված մասնագետներ և մասնագիտական որակը չկարևորող տնօրեններ: Ըստ մասնագետների կարծիքի, ներառական կրթության զարգացման արդյունավետությունը կարելի է կապել ոլորտում աշխատող յուրաքանչյուր մարդու բարեխիղճ մոտեցման և գրագետ լուծումների հայթայթման հետ: Կարևոր է և անհրաժեշտ. · ԶԼՄ-ների միջոցով գրագետ և հաճախակի լուսաբանումները,

· աղապտացված մեթոդաբանություն ,

· մասնագետների վերապատրատումները

· դպրոցներում ողջ անձնակազմի խորքային վերապատրաստումները

·հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ վերապատրաստումները և խորհրդատվությունը

· համապատասխան մասնագետների ընդգրկումը ներառական կրթություն իրականցնող դպրոցներում

· դասարաններում աշակերտների քանակի նվազեցումը:

Ի՞նչ մեթոդներ կիրառել առավել արդյունավետ ներառում կազմակերպելու համար առարկայական դասապրոցեսում և հատկապես՝ տարրական դպրոցում: Դասապրոցեսին ընդգրկված ԿԱՊԿՈՒ երեխաներին պետք է ապահովել առարկայի շրջանակներում նվազագույն գիտելիքներով՝ հենվելով.

ԱՌԱՋԻՆ - երեխայի անհատական առանձնահատկություններից

ԵՐԿՐՈՐԴ – ընդունել այդ երեխային այնպիսին, ինչպիսին կա, կարողանալ շփվել երեխայի հետ և ստեղծել իր հասակակից երեխաների հետ շփման ուղիներ:

ԵՐՐՈՐԴ –իրազեկված լինել ծնող-ԿԱՊԿՈՒ երեխա հարաբերություններից և ծնողի հետևողականության աստիճանից:

Նվազագույն գիտելիքներ փոխանցելու համար նախ հարկավոր է ուսումնասիրել և ճանաչել ԿԱՊԿՈՒ երեխայի՝ նկատելի և ոչ նկատելի խնդիրները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի վերաբերյալ հանգամանորեն ուսումնասիրելով, վերլուծելով համապատասխան գրականությունը և պրակտիկայի ընթացքում կատարած դիտարկումների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Ներառական կրթությունը գործընթաց է, որն հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև հատուկ կարիքների և սահմանափակ հնարավորություն ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա:
2. Ներառումն բազմակողմ գործընթաց է: Այն արտացոլում է սոցիալական, իրավական, տնտեսական, հոգեբանական և մանկավարժական հիմնախնդիրների համադրությունը:
3. Ներառումը սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:
4. Ներառումն անհրաժեշտ է, քանի որ երեխաները անկախ սահմանափակ հնարավորությունների կամ կրթական դժվարությունների, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դեր ունեն հասարակության մեջ:
5. Ներառական Կրթության հիմնական նպատակն է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները սովորեն համայնքային դպրոցներում `մյուս բոլոր աշակերտների հետ միասին և չմեկուսանան, լինեն հասարակության լիիրավ անդամ:
6. Համընդհանուր ներառական համակարգի ներդրումը կապկու աշակերտների կրթական միջավայրի պարզ փոփոխությամբ չի սահմանափակվում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՈՒսումնասիրություններից պարզ դարձավ, որ դպրոցներում միայն ներառված աշակերտի ծնողների հետ են տարվում աշխատանքներ, մինչդեռ կարելի է նաև այդ աշխատանքներին մասնակից դարձնել բոլոր ծնողներին, ուսուցիչներին և ինչու՞ չէ նաև աշակերտներին:
2. Կարելի է հեռուստացուցով ավելի հաճախ խոսել այս ծրագրի մասին և հարստացնել համացանցը համապատասխան նյութերով:

3. Կապկու երեխաների կրթական նվաճումները և նրանց արդյունավետ ներգրավումը երաշխավորելու նպատակով ավելացնել բազմամասանագիտական թիմի և ուսուցչի օգնականների ներգրավվածությունը օրական և ժամային կտրվածքով:
4. Կազմակերպել ուսուցչական անձնակազմի համար ներառական կրթության նորարարական մեթոդների ու հնարների վերաբերյալ վերապատրաստումներ:
5. Կապկու երեխաների համար ավելացնել արհեստագործական դասաժամեր, ինչը կնպաստի կապկու աշակերտների մոտորիկայի զարգացմանը, միաժամանակ հնարավորություն կտա նոր հմտություններ ձեռք բերել:
6. Բուհական հաստատությունների մանկավարժական ֆակուլտետներում (հատուկ կրթության և հոգեբանության ֆակուլտետների հետ մեկտեղ) ավելացնել կապկու աշակերտների հետ պրակտիկ աշխատանքին վերաբերող թեմաներ/դասաժամեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եթե ձեր երեխան ունի հատուկ կարիք, ՅՈՒՆԻՍԵՖ, Տաթև հոգեբանական և աջակցության կենտրոն, Երևան, 1995թ.,83 էջ:
2. Կրթություն հանուն արժանապատիվ կյանքի, Երևան, 2006թ., 26
3. Հատուկ կարիքներով երեխաների իրազեկում կրթության իրավունքների չափորոշիչ, Երևան, 2006թ., 272 էջ:
4. Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ,
5. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2002թ., տարեկան հաշվետվություն:
6. Ներառման ուղեցույց՝ ապահովելու համար մատչելի կրթություն բոլորի համար, ՅՈՒՆԵՍԿՕ, Հույսի կամուրջ, Առաքելություն Արևելք Երևան, 2007թ., 40 էջ:
7. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության Տնօրենի ուղեցույց, Երևան, 2009թ.,34
8. Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2006թ., 264 էջ:
9. Օրենքներ հաշմանդամ երեխաների կրթության իրավունքների մասին, Հույսի կամուրջ հկ, Երևան, 1999թ., 16 էջ:
10. Баталов, А.С. Использование инклюзивных педагогических технологий в диагностике речевого развития учащихся начальных классов/ А.С. Баталов// Начальная школа. – 2010. — №7,34
11. Кафьян Э. М., Азарян А. Р. Интегрированное обучение и воспитание детей с отклонениями развития в Армении // Дефектология. 2006 ,76
12. Мудрик А.В., Введение в социальную педагогику. – М., 1997.,125
13. Семенов В.Д., Взаимодействие школы и социальной среды. – М., 1986, 189
14. Сулейменова Р. А., О Включении детей с ограниченными возможностями в общеобразовательный процесс ,89
15. https://krtutyun.wordpress.com/ներառական-կրթություն
16. http://www.edu.am
17. http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67166